

Ա Խ Ա Լ Ց Խ Ա

Հետևեալ գրութիւնքը Վեր. Մակար Ս. Արքեպիսկոպոսի՝ Ախալցխոյ Արժ. Փոխանորդի և Ս. Կարապետեան Հոգ. և Ազգ. Ուսումնարանի Հոգաբարձուաց խորին ուշադրութեանց կը յանձնեմք:

Ներկայ 1871 ամի Յուլիսի 24-ին քաղաքիս Կարապետեան Հոգեւոր Ուսումնարանի Հոգաբարձուաց հրաւիրանքը ընտրուած էի նոյն Ուսումնարանի մէջ Ընդհանուր ազգաց, Ազգային և Բնական պատմութեանց ու Աշխարհագրութեան ուսուցիչ տարեկան 420 ռուբլի ռոճկաւ. Հոգաբարձութիւնը պաշտօնական կերպով ինձմէ ստորագրութիւն առած էր, որով ես պարտաւորեալ էի արձակուրդի օրերէն զկնի պայինքն Յետեմբերի մէկէն սկըսել իմ պաշտօնը: Որոշեալ օրէն մէկ օր յառաջ պայինքն Օգոստոսի 31-ին Հոգաբարձութիւնը բերանացի ինձ բացասեց նոյն պաշտօնը վարելու իրաւունքը առանց պատճառը ինձ իմացնելու. ամենայն մարդ որ փոքր ի շատէ գիտի թէ ո՞քան կը դիպչեն մարդուս անձնասիրութեանը այսպիսի հանգամանքներ, կուզէ անշուշտ իմանալ բանին էութիւնը. նոյնը արի և ես Սեպտեմբեր 6-ին հետևեալ խնդիրը ուղղելով Հոգաբարձութեանը.

«Համաձայն Յուլիսի 24-ին ներկայ ամի Հոգեւոր Ուսումնարանի Օրագրութեանը ըստ հրաւիրանաց Հոգաբարձութեանդ ընդունած էի զոյն Ուսումնարանի մէջ Ազգային, Ընդհանուր ազգաց պատմութեան, Աշխարհագրութեան և Բնական պատմութեան դասախօսութեանց պաշտօնը տարեկան չորս հարիւր քսան ռուբլի ռոճկաւ. արդ որովհետև Օգոստոսի 31-ին Հոգաբարձութիւնդ բերանացի ինձ բացասեց ուսուցչական նոյն պաշտօնը առանց պատճառը ինձ ծանուցանելու և չընայելով իմ քանիցս անգամ խնդրանացս՝ ցարդ չվերադարձուց ինձ նոյն օրագրութեան պատճէնը, որուն ստորագրած էին նա և միւս ուսուցիչները՝ ուստի ներկայիս պատիւ ունիմ կրկնել Հոգաբարձութեանդ իմ խնդիրս, վերադարձուցանել ինձ կարելին փութով նոյն օրագրութեան պատճէնը

և զին ուսուցչութենէ հրաժարեցնելուն պատճառը դրաւոր կերպով յայտնել:

Հոգաբարձութիւնը ամիս ու կէս աւելի անպատասխանի թողեց իմ այս խնդիրը, այնպէս որ ես ամենայն օր այրիին նման նոցա քով կերթայի և «Դատ արա՛ ինձ, կասէի, բայց Հոգաբարձութիւնը չէր լսեր իմ ձայնը. ընթերցող եթէ իմ տեղս դու լինէիր՝ ի՞նչ կասէիր Հոգաբարձութեանը՝ որ 4 ամիս իմ ձեռքն ու ոտքը կապել էր՝ ոչ ինձի իմ պաշտօնը վարելու թողնելով, ոչ ալ պատճառը յայտնելով կամ զոնեա՛ իմ ստորագրութիւնս ինձի ետ դարձունելով: Այս միջոցին ես հարկադրուեցայ ծախքերու մէջ մտնել և քաղաքական նօթարիուսի ձեռքով իմ խնդրոյս պատասխանը պահանջել: Հոգաբարձութիւնը այս անգամ ստիպուեցաւ նոյեմբերի 20-ին ուր ուրեմն ինձ պատասխանել, և պատասխանեց գրութեամբ իւրով համար 37 այսպէս. «Առ խնդրագիր պարօն Յովակիմայ Գեղամեան Հոգաբարձութիւնս ծանուցանէ նմին թէ սոյնն (այսինքն Հոգաբարձութիւնն) ինքեան յայտնի պատճառաւ արձակեաց զինքն ի կոչեալ վարժապետական պաշտամանէն համաձայն 8-րդ յօդուածոյ կանոնագրութեան Կարապետեան Հոգեւոր Ուսումնարանին և վասն տուչութեան պատճէնի օրագրութեան սորին, առնէ զանցառութիւն, — Զարմանալի ծիծաղաշարժ պատասխան որուն համար մէկ թերթ թուղթ և 1/4 կրուանքայ կնքամով է փշացուցած Հոգաբարձութիւնը. — Եթէ Հոգաբարձութիւնը չզիտէ, ես լաւ գիտեմ որ առանց պատճառի բան չլինիր. Հոգաբարձութիւնը երբ ինձ արձակեց՝ հարկաւ մէկ պատճառ ունեցաւ, նորա ուղղակի պարտքն էր այդ պատճառը ինչի իմացնել, ապա թէ ոչ ես ուսկի՞ց գիտնամ թէ մեղաւոր եմ, ուսկի՞ց գիտնամ թէ Հոգաբարձութիւնը օրինաւոր գործ տեսնող է, իրաւունք և արդարութիւն բառերը բըռնութեան և եսականութեան հետ չհիփոթէ. եթէ եսականութիւն չէ՝ ապա ի՞նչ է որ Հոգաբարձութիւնը ինձ օրագրութեան պատճէնը չի տայ, տէրութեան ամեն զիւանական ատենաները պատճէն կուտան, Հոգաբարձութեան օրագրութեանը մէջ ի նչ գաղտնիքներ կան որ նա չի ուզեր դուրս տալ. միք նոյն օրագրութեանը մէջ ստորագրած

ատեննիս ոչինչ 8—րդ յօդուած չէինք ճանաչեր, այդ ինչ սքանչելադորձ յօդուած է որ հիմայ դուրս է ընկել, բայց տեսնեմք թէ ինչ կասէ այդ 8—րդ յօդուածը. «Հոգաբարձութիւնն Ուսումնարանի կարգէ և արձակէ ըստ իւրում նկատողութեան զտեսուչն և զուսուցիչս առարկայից և լիզուաց. . . բայց երբոր մէկը Հոգաբարձութենէն իբրեւ արժանաւոր անձն կհրաւիրուի և քննարկուի և առանց մէկ դաս տալու կարձակուի՝ ո՞վ է մեզաւորը, նոյն ա՜նձը թէ այդ յօդուածը, բայց ես հարկ կհամարիմ յայտնել Հոգաբարձութեանը՝ որ ո՛չ ես եմ մեղաւոր և ոչ 8—րդ յօդուածը, այլ Հոգաբարձութիւնը՝ որ բնաւ չէ հասկացած՝ նոյն յօդուածը և նորա գործադրելու տեղն ու միջոցը:

Վարապետեան Ուսումնարանի Հոգաբարձութիւնը ինչպէս իւր գործերէն կերևի, բնաւ տեղեկութիւն չունի ոչ կանոնողութեան, ոչ Հոգաբարձութեան, ոչ ուսուցչութեան և ոչ Ուսումնարանի վերայ. նա կարծէ թէ Ուսումնարան կառավարելը շուտ շուտ վարժապետները փոխել է, ուստի և Յուլիսի մէկէն սկսեալ (Թող յառաջմանէ եղած փոփոխութիւնը) մինչև ցարդ ուսումնարանէն արձակուեցան կամ ինքնակամ հրաժարեցան Պ. Պ. Արտիմանը, Աշայեանը, Տէր - Մկրտչեանը, Պաղտատարեանը և ես. Սարկաւազ Տէր - Մկրտչեանին հրաժարեցուց Հոգաբարձութիւնը, նորա տեղ պաշտօնական կերպով նշանակեց Պ. Բաղդասարեանը, բայց զինի 4 օրուան վերջինս հրաժարեցուց զարձեալ և Տէր - Մկրտչեանին յանձնեց իւր նախկին պաշտօնը, բաւական է որ նա իւր ձեռքը ունի մէկ կարծեցեալ զօրաւոր զէնք, այսինքն հրէշադորձ 8—րդ յօդուածը. —Նոր եկող Պ. Բարխուդարեանը և Պ. Յարութիւնեանը սկըսեր են իրենց պաշտօնը շարունակել և կշարունակեն մինչև մէկ տարի, վասն զի առանձին քաղաքական իշխանութեան ձեռքովն կապակցադիր են արել, ինչպէս կխօսի, բայց ո՞վ կարող է եւրաշխաւորել թէ նոքա ևս մէկ տարիէն աւելի մընալու են. այս փոփոխութեանց տխուր հետեանը ները չն'ն արդեօք՝ որ Վարապետեան Ուսումնարանը հետզհետէ իւր մահուան դուռը կմօտենայ, աշակերտները հետզհետէ կցրուին և մնացածներն ալ ոչինչ չեն սովորիր և ազգային սնտուկէն իւ-

րաքանչիւր տարի վայրապար գրեթէ 3700 ռուբլի ստակ կվատնուի. խօսքիս ապացոյց ցոյց կուտամ ընթերցողիս. «Մեղու Հայաստանի», այս տարուայ 36 թուահամարէն Հոգաբարձու Պ. Մեկքոն 2իլինկարեանի ծառը, ուսկից պարզ կերևի թէ Վարապետեան Ուսումնարանին աշակերտաց թիւը ո՞րքան էր, ո՞րքանը հետզհետէ պակսեցան և մընացածներէն ո՞րքանը միմիայն հարցաքննուեցան և ո՞րքանը երեսի վրայ թողուեցան իբրեւ ծոյլ և անպէտ աշակերտներ:

Զարմանք է՝ Հոգաբարձութիւնը ամեն տեսակ փոփոխութիւն արաւ, ամեն արդիւնաբեր ուսուցիչ արձակեց, միայն մէկը պահեց պինդ կերպով և թէ՛ Վարապետեան թէ՛ Օրիորդաց Ուսումնարանէն առատօրէն նորա սովորի կտրուի իւրաքանչիւր տարի. Հոգաբարձութիւնը համոզուած է որ աշակերտաց աւելի օգտակար են «Զամեան և Բագրատունցի», քերականութեանց չոր ու ցամաք կանոնները, քան զոր օրինակ բնական պատմութիւնքը, ուստի և հանց Ուսումնարանի պրոգրամայէն այս գիտութիւնը. ես յանձնառու էի եղել 420 ռուբլիով 4 առարկայ դաս տալ, այժմ իմ տեղը եկող ուսուցիչը 500 ռուբլիով 3 առարկայ միայն դաս կուտայ, նոյն ուսուցիչը բերելու համար 100 ռուբլիէն աւելի ծախք վճարեց Հոգաբարձութիւնը Պ. Յարութիւն Ազնաւուրեանցին. Հոգաբարձութիւնը եթէ դաստիարակութիւն ինչ ասել է չի հասկանայ, գոնեա՛ առևտրական գործերու մէջ զբաղած լինելով փողի զանազանութիւնը կարող է իմանալ. Հոգաբարձութիւնը չէ կարող ասել թէ՛ նոր եկող ուսուցիչը ինձմէ աւելի արժանաւոր է, վասն զի իմ արժանաւորութիւնը կամ անարժանաւորութիւնը նա դեռ ևս չգիտէ, կամ ոչ մէկ դասս լսած չէ. իսկ նոր եկող ուսուցչին արժանաւորութենէն է կարծեմ որ երրորդ դասատան 7 աշակերտներէն մէկ ամսուան մէջ 3 հօգի միայն մնացին և նոր տեսչութիւնը այժմ մտադիր է փակել նոյն դասարանը. —Եթէ այսպէս կերթայ, կարծեմ շուտով և միւս դասարանները ևս փակելու պիտի հարկադրուի տեսչութիւնը. թո՛ղ փակուի. Հոգաբարձութեան ինչ փոյթն է, սորանով նա աւելի համարմունք կունենայ մէկ քանի հսութեան խունկ ու մոմ՝ ծը-

խողներուն քով . . թո՛ղ աղղին փողը փչանայ
կորսուի՝ միայն թէ օրինակի յաղաղութիւն որ և իցէ
աղայի մը կիրքը յառաջ երթայ . . : Այսպէսով
որեւիցէ Իգնատոս որ և իցէ Կիրակոս աղաներու
կամքին միմիայն ծառայելով Հոգարարձութիւնը,
Հասարակութեան իրաւանց, խղճի և արդարու-
թեան վերայ բռնանալով, ոչ գործքով՝ այլ լոկ
անուամբ միմիայն աղա կոչուելով իրաւունք չն՞ոս
տայ արդեօք մեզի իրենց ասել այս սովորական
առածը՝ «ես աղա դու աղա, մեր ջաղացքը ո՞վ
աղայ» :

Յ. Գ. Ստորագրեալս ի՞նչո՞ղմանէ սոյն ամի Օգոստոս
ամսոյն մէջ յօդուտ քաղաքիս Եղիսարեթեան ու-
սումնարանին քանի մը անգամ ներկայացում տո-
ւող զերասաններու և իմ՝ կենդրեմ Կարապե-
տեան Հոգեւոր Աւսումնարանի Հոգաբարձուք որ
մեզմէ ստացած 33 թուրի 2() քոր. փողն ստա-
ցած և Աւսումնարանին Մատենին մօտից մէջ գը-
րած լինելուն մասին մեզի տեղեկութիւն տալու
Հաճի գրաւոր կերպով : —

Յ. Գ. Եղիսարեթեան

Ի 22 Նոյեմբերէ 1871 -ով

ՅԱՆՈՒՆՈՒՆ :

ԴԱՐՁԵԱԼ ԱԽԱԼՑԻԱ

ԽՈՒՄԻՐԱՆԻ ԵՒ ԵՐԱՐԱՐ ԿԱՌԱՐԱՐՈՒՄԸ :

Անցեալ փոստայիւ ուղարկած յօդուածովս յի-
շել էի թէ Կարապետեան Հոգեւոր Աւսումնարանի
Հոգաբարձուք զբաղուած են անլազար ուսուցիչ-
ներ փոխելով՝ համոզուած լինելով գուցէ՝ որ Աւ-
սումնարանին յառաջադիմութեան միակ միջոցն է
դա :

Այս շարաթ Հոգաբարձութիւնը փոխեց նա և
Քրանսերէն լեզուի ուսուցիչ Պ. Մկրտիչ Զէնան-
եանցին և Նորա տեղ նշանակեց Պ. Ճուլարտեան
Հայ—կաթողիկ երիտասարդ : Այս հանգամանքը
զանազան տարաձայնութեանց պատճառ եղա-
ւորաբար մէջ, այսպէս Հայ—կաթողիկ ժողովուրդ-
ներէն շատերը սկսան պարծել իրր թէ իրենք թէ

«Հաւատով թէ ուսմամբ և թէ գիտութեամբ ու
բարոյականութեամբ բարձր են քան զԱւստար-
շական Հայերը, որոյ և ապացոյց են Պ. Պ. Մկր-
տիչ Ալիխանեանը և Ճուլարտեանը (երկուսն ալ
կաթողիկ), որոնք մեր Աւսումնարանի մէջ ուսու-
ցիչ և դաստիարակ են, իսկ մեր ժողովուրդը ըս-
կաւ վհատել թէ ինչո՞ւ համար արդեօք Հոգա-
բարձութիւնը մեր աղղի երիտասարդները թողած,
որոնք թէ ուսմամբ թէ գիտութեամբ և թէ բարո-
յականութեամբ բարձր են յիշեալ պարոններէն :

«Կաթողիկներով մեր ուսումնարանը կուզեն ինչեքնել :
Մեր ժողովուրդը այսպէս միշտ կտրանջան Հո-
գաբարձութեան գործողութեանց դէմ, բայց քա-
ղաքի անվաճառաշահութեան և իրենց ընտանե-
կան աղքատ հանգամանքներէն ստիպուած չի հա-
մարձակի բողոքել, վախճալով մի՞ գուցէ այդպէ-
սով նա զրկուի իւր նստած խանութէն՝ իրեն բը-
նակած տնէն՝ իւր մէկ կտոր օրական հացէն . . :
Հատ անգամ նա այդպիսի տխուր փորձեր տեսած
է . . . : Խեղճ ժողովուրդ :

Գիտէ՞ք, ո՞վ Ալիցիսայի Հասարակութիւն, թէ
ինչո՞ւ Հոգաբարձութիւնը կմերժէ ձեր համաքա-
ղաքացի երիտասարդներին . . . որովհետեւ Նորա
գիտեն թէ Աւսումնարանը ի՞նչ տեսակ վնասներ
կքաշէ և որո՞ց ձեռքով, ուստի և կխօսեն, կըր-
րեն, հասարակութեան աչքը բացուելու միջոցներ
կմտածեն, բայց կաթողիկները իրենց ոռճիկը կառ-
նեն և ինչ փոյթ աշակերտները անոնցմէ մէկ բան
կտրովին՝ թէ ոչ, և լռելեայն ետ կքաշուին . . .
և կծիծաղեն . . . թող ծիծաղեն, Հոգաբարձու
աղաներուն ի՞նչ փոյթն է, բաւական է որ Նորա
իրենց և իրենց նման աղաներու կամքովը կշար-
ժին . . . որ և իցէ Իգնատոս աղայի մը դիմաց ե-
լած ժամանակ զերիի նման բարե կրօնեն կկանգ-
նեն և քսան խօսքին 1/2 պատասխան կուտան,
իսկ Հայ երիտասարդները Նորա դիմաց կնստին,
ոտքերն ալ միմիանց վրայ կրդնեն և համարձակ
կխօսեն, ուստի և իբրեւ «լիբը, ու անշնորհք
տղաք, կդատապարտուին :

Հոգաբարձութիւնը փոխեց նա և շարժուս Տէր
Մեսրոպ Կանցեանին և Նորա տեղը նշանակեց
Տէր Եղիա Աւագ քահանայ Համարձումեանին :

Յ. Գ. Եղիսարեթեան :